Մեհմեդ Թալեաթի սպանության 100-րդ տարեդարձը **15.03.2021, 10:56**

ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանը գնդակահարեց Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպչին: Արարքն ունեցավ միջազգային իրավական հետևանքներ: Թեսսա Հոֆման



Մոաբիտյան քրեական դատարանը 1921 թ. հունիսին, որտեղ դատարանի առաջ կանգնած է Սողոմոն Թեհլերյանը: Նա վերին ձախ շարքում է... Լուսանկար՝ Հայաստանի տեղեկատվության և փաստաթղթերի կենտրոնի արխիվ (ՏՓԿԱ, Բեռլին)

1921 թ. մարտի 15-ին՝ կեսօրին մոտ, առանց աչքի ընկնելու, էլեգանտ հագնված մի պարոն զբոսնում է շառլոտենբուրգյան մարդաշատ Հարդենբերգ փողոցում՝ կենդանաբանական այգու ուղղությամբ: Նա չի նկատում, թե ինչպես համերկրացի մի երիտասարդ կտրում է փողոցը և, հասնելով իրեն, առաջ է անցնում իրենից: Երիտասարդը՝ Սողոմոն Թեհլիրյանը՝ ծնված և մեծացած օսմանյան Էրզրում նահանգում, համարվում է մեխանիկայի ֆակուլտետի ուսանող: Համոզվելով, թե ով է իր զոհը, նա ծոծրակին ուղղված կրակոցով տապալեց 47-ամյա Մեհմեդ Թալեաթին: Իրեն ձերբակալելիս նա ասում է. «Ես հայ եմ, նա թո՛ւրք: Ոչ մի ամոթ Գերմանիայի համար»:

Այսօրվա չափանիշներով անսովոր կարճ ժամանակ՝ երկուսուկես ամիս անց, Մոաբիտյան քրեական դատարանում սկսվում է հայ ահաբեկչի դատավարությունը: Նրան սպառնում է մահապատիժ Օսմանյան պետության նախկին Ներքին գործերի նախարարի (1913-17 թթ.) և կառավարության ղեկավարի (1917-18 թթ.) դիտավորյալ սպանության համար: Բայց արդեն մեկուկես օր անց՝ 1921 թ. հունիսի 3-ին, տասներկու անդամներից բաղկացած երդվյալների դատարանը հանգում է նրա անակնկալ արդարացմանը՝ անմեղսունակության պատճառով: Պրուսական դատական իշխանություններն իսկույն հեռացնում են Թեհլերյանին, այնպես որ Թալեաթի այրին չկարողանավ վճռաբեկման բողոք ներկայացնել:

Միջազգային հանրության կողմից և գերմանական սոցիալ-դեմոկրատական, ինչպես նաև լիբերալ մամուլում դատավարության արդյունքը նշվեց՝ որպես բարձրագույն արդարության հաղթանակ, քանի որ Մեհմեդ Թալեաթը 1915-17 թթ. օսմանյան հայերի բնաջնջման գլխավոր պատասխանատուներից էր:

Մեհմեդ Թալեաթը հաշվի էր նստել հատուցման հետ

Մահից քիչ առաջ՝ բեռլինյան տարագրության ընթացքում նա շարադրեց իր հուշերը, որոնք հրապարակվել են 1921 թ. Թուրքիայում: Այդ «ինքնաարդարացման» մեջ Թալեաթը պնդում է, որ մեկուկես միլիոն հայ զոհերն «անշնորհակալության», ապստամբության և օսմանյան պետության հանդեպ դավաճանության պատճառով իրենք են մեղավոր իրենց ոչնչացման համար:

Իրեն նախորդած և հաջորդած բոլոր ցեղասպանների պես նա համոզմունք էր հայտնում, որ կանխարգելիչ (պրևենտիվ) նպատակներով, ի շահ սեփական խմբի հարկադրված էր ոչնչացնել: Հայերի վրիժխնդրության հետ նա հաստատապես հաշվի էր նստում, սակայն մերժեց Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության՝ Մեքլենբուրգի մի մեկուսի ագարակում թաքնվելու առաջարկը:

Սողոմոն Թեհլիրյանը հայկական ընդհատակի անդամ էր: Լուսանկար՝ MAURITIUS IMAGES/CPA MEDIA PTE LTD/ALAMY

Ադոլֆ Հիտլերի հրամանով՝ 1943 թ. մարտին “Neuköllner Eehitlik” («Նահատակներ») մզկիթի թուրքական գերեզմանատանը Թալեաթի աճյունը արտաշիրմվեց և թաղվեց Ստամբուլի Ազատության բլուրի մի դամբարանում: Հիտլերը զուր հույս էր տածում, որ այդ ժեստի միջոցով Թուրքիան նորից կդառնա Գերմանիայի ռազմական դաշնակիցը:

Իր հայրենիքում, ինչպես նաև թուրքական սփյուռքի որոշ հատվածներում Թալեաթը մինչ օրս մեծարվում է որպես հայրենասեր նահատակ: Անկարայի և Ստամբուլի երեք մզկիթներ, ինչպես նաև տարբեր խոշոր քաղաքների յոթ թաղամասեր, երեք բուլվարներ և 21 փողոցներ կրում են նրա անունը:

Թեհլիրյանը գործում էր իշխող կուսակցության հանձնարարությամբ

Թեհլիրյանի դատավարության ընթացքում չխոսվեց, որ ամբաստանյալն իր գործը կատարել է՝ որպես հայկական ընդհատակյա «Վրեժ» («Նեմեսիս», «Հատուցում») կազմակերպության անդամ: 1919 թ. աշնանը սոցիալ-հեղափոխական՝ այն ժամանակ Հայաստանում միայնակ իշխող Դաշնակցություն կուսակցության համագումարը վճիռ կայացրեց «Հատուկ առաքելության»-ը («Հատուկ գործի») վերաբերյալ. Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուները պետք է գտնվեին ու սպանվեին:

Հակառակ վաղուց տրված՝ օսմանյան ռազմական ղեկավարությանը պատերազմական, ինչպես նաև մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար իրավաբանական պատասխանատվության ենթարկելու խոստումներին, Անտանտի անգործությունը նույնքան դեր խաղաց այդ վճռի համար, որքան օսմանյան ռամական ատյանների անգործությունը:

Թեհլիրյանը «Վրեժ»-ի կազմակերպիչների աչքի էր ընկել այն բանից հետո, երբ 1920 թ. մարտին գնդակահարել էր Հարություն Մկրտչյանին: Սա 1915 թ. Ստամբուլի ոստիկանապետի համար կազմել էր քաղաքի երևելի հայ քաղաքացիների անվանացանկ, որոնք 1915 թ. ապրիլի 24-ից ձերբակալվեցին, արտաքսվեցին երկրի խորքերը և այնտեղ, գրեթե առանց բացառության, սպանվեցին. էլիտայի իսկական ոչնչացում (էլիտիցիդ), որն, ահա, սկզբնավորեց տառացիորեն «անգլուխ» հայ ազգի ոչնչացումը:

Թուրքական պետության վրիժխնդրությունից՝ փախուստի մեջ

Մոաբիտյան դատարանում Թեհլիրյանը ներկայացավ որպես իր՝ աքսորված հարազատների ոչնչացման ականատես: 1915 թ. նա փաստացիորեն գտնվում էր Սերբիայում: Գերմանիայից արտաքսվելուց հետո 1921 թ. Թեհլիրյանը վերադարձավ այնտեղ: Մինչև 1950 թ. նա իր կնոջ հետ ապրում էր Բելգրադում: Նախկին վրիժառուն, սակայն, այժմ ստիպված էր ինքը զգուշանալ թուրքական պետության վրեժխնդրությունից:

Այն բանից հետո, երբ Դաշնակցությունը նախազգուշացրեց, որ թուրք գործակալները հետապնդում են Թեհլիրյանին, 1956 թ. ամուսնական զույգը տեղափոխվեց ԱՄՆ: Սան Ֆրանցիսկոյում նա աշխատում էր որպես փոստային ծառայող՝ «Սարո Մելիքյան» ծածկանունով: Նրա կրտսեր որդին նրան բնութագրում էր հետևյալ կերպ. «Նա ամենամեղմ, ամենաբարի մարդն էր՝ գրեթե միամիտ: Ես և ավագ եղբայրս ստիպված էինք նրան ստիպել

մեզ պատմել, թե ինչ էր պատահել: Նա երբեք հաճույքով չէր խոսում այդ մասին: Շատ քչախոս մարդ էր: Բայց գրում էր բանաստեղծություններ և շատ լավ նկարում էր»:

1921 թ. մարտի 15-ին Մեհմեդ Թալաթը գնդակահարվեց Սողոմոն Թեհլիրյանի կողմից Շառլոտենբուրգի Հարդենբերգ փողոցում: Լուսանկար՝ PICTURE ALLIANCE/CPA MEDIA CO. LTD

Միայն 1986 թ. ֆրանսիացի քողազերծող լրագրող Ժակ Դերոժին (դա Ժակ Վեյտցմանն է, 1925-97 թթ.) հայտնաբերեց Թեհլիրյանի կապը «Վրեժ»-ի հետ (Les vengeurs arméniens - Opération Némésis): Գրեթե նույն ժամանակ նախկին ԳԴՀ-ի արխիվներում նախաքննության վավերագրերը և մյուս փաստաթղթերն ուսումնասիրելիս պարզ դարձավ, թե պրուսական արդարադատության մարմիններն ու Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունը որքան մեծ չափով էին փորձել միջամտել դատավարության ընթացքին:

Զուգահեռ դատավարություն գերմանացի ռազմական հանցագործների դեմ

Ամենից առաջ նրանք ուզում էին խուսափել Թեհլիրյանի արարքի քաղաքական դրդապատճառների ընդունումից, քանի որ 1921 թ. մայիսի 23-ին Լայպցիգում դատավարություններ էին սկսվել գերմանացի ռազմական հանցագործների դեմ: Գերմանական քաղաքականությունն ակնհայտորեն վախենում էր, որ կարող են զուգահեռներ անցկացվել օսմանյան և գերմանական հանցագործությունների միջև, ինչի համար Բեռլինի դատավարությունը պետք է անցներ հնարավորինս ապաքաղաքական ու աննկատ կերպով:

Նման նկատառումներից ելնելով՝ Բեռլինի դատավարությունն ուղղակիորեն «մտրակահարվեց» և իր ուշադրությունը կենտրոնացրեց ոչ թե այն հարցի վրա, թե ինչ դեր էր խաղացել Թալեաթը օսմանյան հայերի ոչնչացման գործում, այլ՝ արարքի ժամանակ Թեհլիրյանի հոգեկան վիճակի վերաբերյալ փորձագիտական կարծիքների վրա: Ամեն դեպքում, նկատի առնելով միջազգային ԶԼՄ-ների մեծ հետաքրքրությունը, դատավարության հրապարակայնությունը չճնշվեց:

Ռաֆայել Լեմկինը և պետական ու խոշոր հանցագործությունների պատիժը

Հենց իր թույլ կողմերի պատճառով Բեռլինի քրեական դատավարությունը խոր տպավորություն թողեց այսօրվա Բելառուսում ծնված լեհ-հրեա փաստաբան Ռաֆայել Լեմկինի (1900-1959 թթ.) վրա: Անպատժելիության և լինչի դատաստանի դիլեմայում Լեմկինը նկատեց օրենսդրական այն բացը, որն արգելակում էր խմբի հետ կապված՝ պետական և ծանր հանցագործությունների պատժումը: Ցեղասպանության կանխարգելման և պատժման միջազգային համաձայնագրի մշակումն ու շրջանառության մեջ դնելը դարձան նրա կյանքի գործը:

1926 թ. մայիսի 25-ին հրեա դերձակ, բանաստեղծ և անարխիստ Շալոմ Շվարցբարտը (1886-1938 թթ.) Փարիզում գնդակահարեց ուկրաինացի զորապետ (գլխավոր ատաման) Սիմոն Պետլյուրային: Որպես Ուկրաինայի ազգային Հանրապետության վարչության նախագահ՝ Պետլյուրան պատասխանատու էր 1918 թ. հրեաների կոտորածի համար, որի ժամանակ սպանվել էին նաև Շվարցբարտի ծնողները: 1927 թ. քրեական դատավարությունից հետո Շվարցբարտը, ինչպես Թեհլերյանն իրենից վեց տարի առաջ, ճանաչվեց որպես անմեղսունակ:

Բեռլինի և Փարիզի դատավճիռներով Լեմկինն իրեն հաստատված էր զգում. «Հանցագործն անմեղսունակ է և հետևաբար պետք է անպատիժ մնա: Աստիճանաբար իմ մեջ հասունացավ այն որոշումը, որ ես պետք է գործեմ»:

Ազգերի լիգային համապատասխան համաձայնագիր ներկայացնելու՝ Լեմկինի առաջին փորձը 1933 թ. ձախողվեց՝ ոչ վերջին հաշվով նացիստական Գերմանիայից ի հայտ եկած դիմադրության պատճառով:

Միայն մի նոր համաշխարհային պատերազմից և է՛լ ավելի մեծ ծավալի ցեղասպանությունից հետո՝ 1948 թ. ՄԱԿ-ն ընդունեց ցեղասպանության կանխարգելման և պատժման մասին համաձայնագիրը, որը հիմնականում նախապատրաստվել էր Լեմկինի կողմից: Ըստ Լեմկինի՝ դրանում պարունակվող ցեղասպանության սահմանումը էմպիրիկորեն հիմնված է օսմանյան քրիստոնյաների ոչնչացման, ինչպես նաև եվրոպական հրեաների ցեղասպանության վրա:

(Հեղինակը սոցիոլոգ է և 1983-2015 թթ. եղել է Բեռլինի Ազատ համալսարանի Արևելյան Եվրոպա ինստիտուտի գիտաշխատող):

Հրապարակվել է “Der Tagesspiegel”-ում (https://www.tagesspiegel.de/wissen/100-jahrestag-des-mordes-an-mehmet-talat-rache-fuer-die-armenier-und-ihre-folgen/27001168.html):